որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերը՝ նա իրենցովն զիրենք դատեն՝ իշխանաց իշխանքն, զթագաւորին ճորտերն թագաւորի հրամանաւքն»[40]։

Ինչպես տեսնում ենք, ձիավորները ենթարկվում էին իրենց սենյոր իշխանաց իշխանին կամ իշխաններին և դատվում էին նրանց կողմից։ Իրենց հերթին ձիավորները՝ ցած հեծելվորները, որոնք նույնպես ազատ էին կոչվում[41], դատում էին իրենց ճորտերին, բայց նրանք իրավունք չունեին մահվան դատավճիռ կայացնելու իրենց ճորտերի նկատմամբ, որովհետև այդ իրավունքը պատկանում էր թագավորին և իշխանաց իշխանին։ «...Ապա զնդանել և ծեծել և տուգանել և հանել, վարել յիրենց տեղոյ ի բաց՝ կարեն այնել»[42]։ Այս դեպքում խոսքը վերաբերում է ճորտ գյուղացիներին, որոնք պատկանելիս են եղել ձիավորներին։ Սակայն օրենքը սահմանափակում է նրանց իրավունքը, ընդ որում նրանք չէին կարող իրենց ճորտերին «հայրենէ փթել առանց պարոնին»[43]։

Վերոհիշյալից պարզ երևում է, որ ձիավորները հանդիսացել են առավել խոշոր իշխանների լիճ ճորտերը, երկրակալները, այսինքն մանր ֆեոդալ հողատերերը, որոնք ունեցել են ճորտ գյուղացիներ։

Ինչպես ասացինք, Կիլիկիայի հայկական պետության բանակի կորիզը հանդիսացող հայոց հեծյալը հիմնականում ստեղծված էր և պահպանում էր բուն Հայաստանի Արշակունյաց և Բագրատունյաց շրջանների «հայոց այրուձիի» տրադիցիաները։ Սակայն նոր միջավայրում, նոր պայմաններում և խաչակիր պետությունների ազդեցության տակ նա ենթարկվել է որոշ փոփոխությունների։

Խաչակիր արշավանքների առաջին շրջանում խաչակիր բանակներում, ի տարբերություն արևմտաեվրոպական բանակների, որտեղ իր սենյորի նկատմամբ հեծյալի ստանձնած վասալական զինվորական ծառայության հիմքում ընկած էր սենյորից ստացած ֆեոդը (Հայաստանում Խոստակը)[44] և սենյորից ստացած թոշակը (վերջինս հիմնականում ծանրացած է ճորտ գյուղացիության վրա), վարձատրության հիմնական ձևը հանդիսանում էր պատերազմական ավարի բաժանումը[45]։ Նույնիսկ ավելի ուշ շրջանում Երուսաղեմի թագավորության անկումից հետո 12—13-րդ դդ. սկզբին՝ առաջանում է հողազուրկ ազնվականների մի դասակարգ, որը հետևանք էր մի կողմից նվաճված հողերը մուսուլմանների կողմից վերագրավելու և մյուս կողմից իբրև հետևանք ավատների մանրացման։ Վերջին երևույթի դեմ պայքարում էին Անտիոքի Ասսիզների[46] և Երուսաղեմի Ասսիզների[47] օրենսդիրները։ Սակայն վերջիններս չարդարացրին իրենց և այսպես 12-րդ դարի վերջին Կիլիկիայում և խաչակրաց պետություններում առաջանում է մանր ազնվականության՝ ձիավորների հողազուրկ մի դաս, որի մասին ֆրանսիական «էոնոլ և Բերնարդ դան-

---

40 Նույն տեղում, էջ 82։

41 Նույն տեղում, էջ 87։

42 Նույն տեղում, էջ 82—83։

43 Նույն տեղում։

44 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 116։

45 К. Маркс и Ф. Энгельс, Архив. Т. VI, стр. 166—167, տես նաև R. Grousset, Histoire des Croisades, Paris, 1936, t. I, p. 111.

46 Assises d'Antioche, Trad. L'Alishan, Venise, 1876, p. 21—22.

47 Assises de Jerusalem, Ed. Beugnot, Paris, 1843, p. 35—36.